

Հայոց լեզվի ամբիոնի գիտահետազոտական ուսումնասիրությունների շրջանակներն են՝

1.Ժամանակակից հայերենի քերականության հիմնահարցեր, 2.Կիրառական լեզվաբանություն, 3.Հայոց լեզվի պատմություն , իսկ 2016թվ. մայիսի 30-ին կայացած ամբիոնի նիստում հաստատվել են այդ ուղղությունների շրջանակներում իրականացվելիք կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերը:

Կարճաժամկետ ծրագրեր.

1. «Կիրառական լեզվաբանության հարցեր» դասախոսության նյութեր – կատարողներ՝ Դավիթ Գյուլգաստյան, Հասմիկ Հարությունյան (պատրաստ է ձեռագիր վիճակում),
2. «Ընդհանուր լեզվաբանության» – կատարող՝ Դավիթ Գյուլգաստյան (առաջին բաժինը՝ «Լեզվաբանության պատմության ուրվագիծ» խորագրով, իսկ երկրորդ բաժինը՝ «Լեզվի ստորակարգային մակարդակների գոյամակարդակային տեղայնացումը», կատարվել է Համալսարանի ներբուհական դրամաշնորհի շրջանակներում),
3. «Լեզվաբանության հիմունքներ» ուսումնական ձեռնարկ – կատարող՝ Հեղինե Մելքոնյան (կատարվել է Համալսարանի ներբուհական դրամաշնորհի շրջանակներում):

Երկարաժամկետ ծրագրեր.

1. «Ժամանակակից հայոց լեզու. շարահյուսություն» ուսումնական ձեռնարկ – կատարողներ՝ Գուրգեն Խաչատրյան, Լիլիթ Պետրոսյան: Աշխատանքի տեսական մասը, ամբիոնի դասախոս Լ. Պետրոսյանը աշխատում է գործնական աշխատանքների բաժնի վրա, այն, ըստ ժամանակացույցի, պետք է ավարտվի 2019-2020 ուստարում:
2. «Հայոց լեզվի պատմություն» ուսումնական ձեռնարկ – կատարողներ՝ Թերեզա Շահվերդյան, Լիլիթ Պետրոսյան: Ավարտվել է ժամանակից շուտ՝ 2019 թվականի փոխարեն՝ 2017 թվականին, շնորհիվ Համալսարանի ներբուհական դրամաշնորհի:
3. «Հատկանվանագիտական եզրույթների բառարան» – կատարողներ՝ Հասմիկ Հարությունյան, Հասմիկ Բարխուդարյան, Արեն Սանթրոսյան: Ընթացքի մեջ է աշխատանքի առաջին փուլը՝ հատկանվանական եզրույթների քարտագրումը: Բառարանի վերջնական խմբագրումը մախատեսվում է իրականացնել մինչև 2022 թ.:

4. «Լեզվանշանագիտական բառարան» – կատարող՝ Դավիթ Գյուլգատյան:
Ընթացքի մեջ է աշխատանքի առաջին փուլը՝ լեզվանշանագիտական
եզրույթների քարտագրումը: Աշխատանքի վերջնաժամկետ է սահմանված
2021թվականը:

Հայոց լեզվի ամբիոնի վարիչ՝

բ.գ.թ., դոցենտ Հ. Հարությունյան

13.11. 2018թ.